Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Եվրասիական զարգացման բանկը,

ղեկավարվելով Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին 2006 թվականի հունվարի 12-ի համաձայնագրով (այսուհետ՝ Համաձայնագիր) և Եվրասիական զարգացման բանկի կանոնադրությամբ (այսուհետ՝ Կանոնադրություն),

Հայաստանի Հանրապետության տարածքում Եվրասիական զարգացման բանկի գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծման, ինչպես նաև նրա կարգավիճակի, անձեռնմխելիությունների, առավելությունների և արտոնությունների սահմանման նպատակով,

համաձայնեցին ներքոնշյալի մասին.

Հոդված 1

Օգտագործվող տերմինները

Սույն Համաձայնագրում օգտագործվում են Կանոնադրությունում հիշատակվող, ինչպես նաև հետևյալ հասկացությունները.

ա) «Կառավարություն» նշանակում է՝ Հայաստանի Հանրապետության Կառավարություն,

բ) «Բանկ» նշանակում է՝ Եվրասիական զարգացման բանկ,

գ) «Ներկայացուցչություն» նշանակում է՝ Բանկի ներկայացուցչությունը ք. Երևանում, ինչպես նաև այլ ներկայացուցչություններ, որոնք Կառավարության հետ համաձայնեցմամբ կարող են բացվել Հայաստանի Հանրապետության տարածքում Բանկի կողմից,

դ) «Բանկի խորհուրդ» նշանակում է՝ Բանկի կառավարման բարձրագույն մարմին, որը Կանոնադրության հիման վրա իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր կառավարումը,

ե) «Բանկի շինություններ» նշանակում է՝ այն շենքերը և շենքերի մասերը, որոնք շենքի կամ շենքի մասին հարակից հողատարածքի հետ համատեղ օգտագործվում են Բանկի պաշտոնական նպատակներով և պատկանում են Բանկին կամ Ներկայացուցչությանը սեփականության, գույքային վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով,

զ) «Բանկի ավտոտրանսպորտ» նշանակում է՝ Բանկի կամ ներկայացուցչության ավտոմոբիլային տրանսպորտի շարժական կազմի միավոր, ներառյալ՝ ավտոբուսներ, միկրոավտոբուսներ, մարդատար և բեռնատար ավտոմեքենաներ, ավտոմեքենաների կցասայլեր, թամբով

քարշակների կիսակցասայլեր, ինչպես նաև հատուկ նշանակության ավտոմեքենաներ (նախատեսված բեռների որոշակի տեսակների տեղափոխման համար) և հատուկ ավտոմեքենաներ (նախատեսված տարբեր՝ առավելապես ոչ տրանսպորտային աշխատանքների կատարման համար), որոնք պատկանում են Բանկին սեփականության, գույքային վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով,

է) «Լիազոր ներկայացուցիչներ և նրանց տեղակալներ» նշանակում է՝ Բանկի խորհրդում Բանկի մասնակցի ներկայացուցիչներ՝ Կանոնադրության 13-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան,

ը) «Բանկի պաշտոնատար անձինք» նշանակում է՝ Բանկի վարչության նախագահ, Բանկի վարչության նախագահի տեղակալներ, Բանկի վարչության անդամներ,

թ) «Բանկի աշխատակիցներ» նշանակում է՝ Կանոնադրության համապատասխան՝ Բանկի գործունեության հետ կապված աշխատանքի համար Բանկի կամ Ներկայացուցչության կողմից Բանկի ներքին կանոններին և դրույթներին համապատասխան կերպով վարձված ողջ անձնակազմը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում ժամավճարի պայմաններով ընդունված անձանց,

ժ) «Ընտանիքի անդամներ» նշանակում է՝ Բանկի պաշտոնատար անձանց և աշխատակիցների ընտանիքի անդամներ, ներառում է նրանց կանանց, ամուսիններին, երեխաներին, ծնողներին, ինչպես նաև նրանց հետ ապրող ընտանիքի այլ անդամներին, որոնք Բանկի, Ներկայացուցչության տվյալ պաշտոնատար անձանց և աշխատակիցների խնամակալության ներքո են,

ժա) «Մասնավոր տնային աշխատող» նշանակում է՝ այն անձը, որը տնային աշխատողի պարտականություններ է կատարում Բանկի, Ներկայացուցչության պաշտոնատար անձանց և աշխատակիցների համար և չի հանդիսանում Բանկի, Ներկայացուցչության աշխատակից,

ժբ) «Սպասարկման կոնկրետ տեսակների համար վճար» նշանակում է՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ սահմանված պարտադիր վճարումներ բյուջեին (գանձումներ, վճարներ և պետական տուրք), որոնց սպառիչ ցանկը նշված է սույն Համաձայնագրում,

ժգ) «Բանկի արխիվներ» նշանակում է՝ բոլոր գրառումները, նամակագրությունը, փաստաթղթերը և այլ նյութերը, ներառյալ ձեռագրերը, լուսանկարները և ֆիլմերը, ձայնագրությունները, համակարգչային ծրագրերը և գրավոր նյութերը, տեսաժապավենները և սկավառակները, ինչպես նաև տվյալներ պարունակող սկավառակները կամ ժապավենները, որոնք պատկանում են Բանկին, Ներկայացուցչությանը կամ Բանկի անունից որևէ մեկին,

ժդ) «Բանկի խորհրդակցություններ» նշանակում է՝ Բանկի կամ Ներկայացուցչության խորհրդակցություններ, ներառյալ Բանկի կամ Ներկայացուցչության կողմից հրավիրվող բոլոր միջազգային կոնֆերանսները կամ խորհրդակցությունները և ցանկացած այդպիսի խորհրդակցության հանձնաժողովը, կոմիտեն կամ ենթախումբը,

ժե) «Բանկի գույք և ակտիվներ» նշանակում է՝ սեփականության, գույքային վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով Բանկին կամ

Ներկայացուցչությանը պատկանող ամբողջ գույքը և ակտիվները:

Հոդված 2

Բանկի իրավական կարգավիճակը և իրավունակությունը

Բանկը միջազգային կազմակերպություն է՝ միջազգային իրավունքի սուբյեկտ, ունի միջազգային իրավունակություն և իրավունք ունի, մասնավորապես, իր իրավասության շրջանակներում կնքելու միջազգային պայմանագրեր՝ Բանկի Կանոնադրությանը համապատասխան:

Բանկը Հայաստանի Հանրապետության տարածքում ունի իրավաբանական անձի իրավունքներ և, մասնավորապես, իրավազոր է.

ա) Բանկի Կանոնադրությամբ սահմանված իր իրավասության սահմաններում կատարելու ցանկացած գործարք,

բ) վարձակալելու, ձեռք բերելու և օտարելու շարժական և անշարժ գույք, ինչպես նաև այլ ձևով տնօրինելու նշված գույքը,

գ) հանդես գալու դատական և արբիտրաժային մարմիններում: Բանկն իր շահերի պաշտպանության համար ունի նույն դատավարական իրավունքները, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված են իրավաբանական անձանց համար,

դ) իրականացնելու այլ գործողություններ, որոնք ուղղված են, Կանոնադրությանը համապատասխան, Բանկին հանձնարարված խնդիրների կատարմանը:

Հայաստանի Հանրապետության տարածքում Բանկի գործունեությունը որոշվում է կիրառվող միջազգային պայմանագրերով, Բանկի հիմնադրման մասին Համաձայնագրով, Կանոնադրությամբ և սույն Համաձայնագրով, Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինների հետ համաձայնագրերով, իսկ դրանց բացակայության դեպքում կամ նշված փաստաթղթերով չկարգավորվող մասով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության դրույթները, որոնք սահմանում են կազմակերպությունների ստեղծման, արտոնագրման, գործունեության կարգավորման և դադարեցման կարգը, Բանկի վրա չեն տարածվում:

Այն դեպքում, երբ իրականացվող գործունեության տեսակները կամ գործառույթներն ու գործարքները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, պահանջում են Բանկի կարգավիճակի առկայություն, ապա այդպիսի գործունեության տեսակների կամ գործառույթների ու գործարքների առումով Բանկը կդիտվի որպես բանկի կարգավիճակ ունեցող:

Բանկն իրավունք ունի հիմնելու (ստեղծելու) դուստր բանկեր, մասնակցելու բանկերի կանոնադրական հիմնադրամներին, ոչ բանկային ֆինանսավարկային կազմակերպություններին՝ Բանկի Կանոնադրությամբ սահմանված կարգով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 3

Բանկի և Ներկայացուցչության անձեռնմխելիություններն ու առավելությունները

Բանկի և Ներկայացուցչության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող գույքը և ակտիվներն ունեն անձեռնմխելիություն խուզարկության, բռնագրավման, կալանման, առգրավման, էքսպրոպրիացիայի կամ առգրավման և օտարման ցանկացած այլ ձևի նկատմամբ մինչև Բանկի նկատմամբ վերջնական դատական վճռի ընդունումը:

Բանկի և Ներկայացուցչության գործառույթների իրականացման և նպատակներին հասնելու համար, անհրաժեշտ չափով և հաշվի առնելով Բանկի Կանոնադրության դրույթները, Բանկի և Ներկայացուցչության ողջ գույքը և ակտիվները ազատ են ցանկացած սահմանափակումից, կարգադրագրից և մորատորիումից:

Բանկը և Ներկայացուցչությունն ունեն անձեռնմխելիություն ցանկացած դատական հետաքննության նկատմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, որոնք նրա լիազորությունների կատարման հետևանք չեն կամ կապված չեն այդ լիազորությունների իրականացման հետ: Բանկի կամ Ներկայացուցչության դեմ հայցեր կարող են հարուցվել միայն այն պետության տարածքում գործող իրավասու դատարաններում, որտեղ տեղակայված է Բանկը կամ ունի մասնաճյուղ, դուստր բանկ, դուստր կազմակերպություն կամ ներկայացուցչություն, կամ գործակալ է նշանակել դատական ծանուցագիր ստանալու կամ դատավարության մասին տեղեկանալու նպատակով, կամ թողարկել է արժեթղթեր, կամ երաշխավորել է դրանք:

Բանկի արխիվները, գույքը, ինչպես նաև ցանկացած տեղեկատվություն, որոնք պատկանում են նրան, կամ որոնց սեփականատերը նա է, անձեռնմխելի են Հայաստանի Հանրապետության տարածքում:

Հոդված 4

Ներկայացուցչություն

Բանկը՝ որպես միջազգային կազմակերպություն, Հայաստանի Հանրապետությունում բացում է Ներկայացուցչություն Երևան քաղաքում՝ Հայաստանի Հանրապետությունում Բանկի գործունեության արդյունավետ իրականացմանն աջակցելու նպատակով:

Բանկն իրավունք ունի Կառավարության հետ համաձայնեցմամբ բացելու լրացուցիչ ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնելու դուստր բանկեր Հայաստանի Հանրապետության տարածքում:

Հոդված 5

Ներկայացուցչության շինությունների անձեռնմխելիությունը

Ներկայացուցչության շինություններն ու ավտոտրանսպորտը Հայաստանի Հանրապետության տարածքում անձեռնմխելի են: Հայաստանի

Հանրապետության պետական մարմինների ներկայացուցիչներն իրավունք ունեն մտնելու Բանկի շինություններ միայն Բանկի վարչության նախագահի կամ նրա անունից գործելու համար լիազորված անձի թույլտվությամբ: Թույլտվության առկայություն ենթադրվում է հրդեհի կամ նման արտակարգ հանգամանքների դեպքում, որոնք պահանջում են դրանց վերացման ուղղությամբ անհապաղ գործողություններ: Ենթադրվող թույլտվության հիման վրա շինություններ մտած ցանկացած անձ անմիջապես հեռանում է այդ շինություններից Բանկի վարչության նախագահի կամ նրա անունից գործելու համար լիազորված անձի խնդրանքով:

Բանկը կարող է սահմանել կանոններ, որոնք գործում են Ներկայացուցչության ներսում, Կանոնադրությանը համապատասխան իր խնդիրների կատարման համար:

Բանկի շինությունների և ավտոտրանսպորտի անձեռնմխելիությունը իրավունք չի տալիս դրանք օգտագործելու այնպիսի նպատակներով, որոնք չեն համապատասխանում Բանկի գործառույթներին և խնդիրներին կամ վնաս են հասցնում Հայաստանի Հանրապետության անվտանգությանը, նրա քաղաքացիների և իրավաբանական անձանց շահերին:

Բանկի շինություններն ու ավտոտրանսպորտը չեն կարող որպես ապաստան ծառայել արդարադատությունից թաքնվող անձանց համար, որոնք հետապնդվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ ենթակա են հանձնման այլ պետության:

Հոդված 6

Ներկայացուցչության շինությունների պաշտպանությունը

Ներկայացուցչության շինությունների պաշտպանությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության այն համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման հետ պայմանագրի համաձայն, որը լիազորված է իրականացնելու գործառույթներ պաշտպանական գործունեության ոլորտում:

Ներկայացուցչությանը տրամադրվում է նույն պաշտպանությունը, ինչ Հայաստանի Հանրապետությունում միջազգային կազմակերպություններին կամ դիվանագիտական ներկայացուցչություններին:

Բանկի կամ Ներկայացուցչության խնդրանքով՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան լիազոր մարմինները տրամադրում են իրավապահ մարմինների անհրաժեշտ թվով աշխատակիցներ՝ Ներկայացուցչությունում կարգուկանոնը վերականգնելու և իրավախախտներին հեռացնելու համար:

Հոդված 7

Բանկի և Ներկայացուցչության գործունեության ապահովումը

Կառավարությունն օգնություն է ցուցաբերում Բանկին և

Ներկայացուցչությանը ծառայություններ ստանալու հարցում, որոնք անհրաժեշտ են Ներկայացուցչության շինություններն այն վիճակում պահելու համար, որն ապահովում է Ներկայացուցչության կողմից իր գործառույթների արդյունավետ իրականացումը:

Կառավարությունը ոչ պակաս բարենպաստ պայմաններով, քան այն պայմաններն են, որոնք տրամադրվում են Հայաստանի Հանրապետությունում ցանկացած այլ միջազգային կազմակերպության կամ դիվանագիտական ներկայացուցչության, ապահովում է անհրաժեշտ ծառայությունների տրամադրումը Բանկին և Ներկայացուցչությանը, ներառյալ կապի ծառայությունները, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի մատակարարումը, կոյուղին, ջրահեռացման համակարգը, թափոնի հավաքումը և հակահրդեհային անվտանգությունը, որոնք որակով չեն զիջի ցանկացած այլ միջազգային կազմակերպության կամ դիվանագիտական ներկայացուցչության տրամադրվող ծառայություններին: Այդ ծառայությունների տրամադրման գործում խափանումների կամ խափանումների վտանգի դեպքում Կառավարությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում, որ դա բացասաբար չանդրադառնա Բանկի և Ներկայացուցչության գործունեության վրա:

Այն դեպքում, երբ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի մատակարարումը կամ ցանկացած այլ ծառայության մատուցումն ապահովվում է Կառավարության, պետական կառավարման հանրապետական մարմինների և Կառավարությանը ենթակա այլ պետական կազմակերպությունների կողմից, Ներկայացուցչությունից վճարը գանձվում է ոչ պակաս նպաստավոր սակագներով, քան այն սակագներն են, որոնցով վճարը գանձվում է Հայաստանի Հանրապետությունում այլ միջազգային կազմակերպություններից կամ դիվանագիտական Ներկայացուցչություններից:

Համապատասխան խնդրանք ստանալու դեպքում Կառավարությունը Բանկին աջակցություն է ցուցաբերում Բանկի և Ներկայացուցչության պաշտոնատար անձանց, աշխատակիցների և նրանց ընտանիքների անդամների համար համապատասխան կացարան ստանալու հարցում:

Կառավարությունը օգնություն է ցուցաբերում Ներկայացուցչությանը բենզին կամ այլ վառելիքային-յուղային նյութեր ստանալու հարցում՝ Բանկի, Ներկայացուցչության ծառայողական օգտագործման համար նախատեսված ավտոմեքենաների և ցանկացած այլ փոխադրամիջոցի համար, ներառյալ նրանք, որոնք օգտագործվում են Բանկի, Ներկայացուցչության պաշտոնատար անձանց և աշխատակիցների կողմից, այն քանակությամբ և գներով, որոնք գործում են Հայաստանի Հանրապետությունում այլ միջազգային կազմակերպությունների կամ դիվանագիտական Ներկայացուցչությունների համար:

Հոդված 8

Կապի միջոցները

Հայաստանի Հանրապետությունում կապի բոլոր տեսակների գերակայությունների, սակագների և դրույքների առումով Բանկը և

Ներկայացուցչությունը օգտվում են ոչ պակաս նպաստավոր պայմաններից, քան այն պայմաններն են, որոնցից օգտվում են Հայաստանի Հանրապետությունում այլ միջազգային կազմակերպությունները կամ դիվանագիտական ներկայացուցչությունները:

Բանկի և Ներկայացուցչության բոլոր՝ ստացվող և հաղորդվող հաղորդագրությունները, անկախ դրանց փոխանցման միջոցից և ձևից, ունեն անձեռնմխելիություն գրաքննության և որսման կամ միջամտության ցանկացած այլ ձևերի նկատմամբ:

Բանկը և Ներկայացուցչությունն իրավունք ունեն Հայաստանի Հանրապետությունում կիրառելու ծածկագրեր և նամակագրություն ու այլ հաղորդագրություններ ստանալ կամ ուղարկել սուրհանդակի միջոցով կամ կնիքներով ամրացված պայուսակներով, որոնք կունենան անձեռնմխելիություն և այնպիսի արտոնություններ, որոնք տրամադրվում են դիվանագիտական սուրհանդակներին և դիվանագիտական փոստին:

Հոդված 9

Հարկային արտոնություններ

Բանկը, Ներկայացուցչությունը, նրանց եկամուտները, գույքը և այլ ակտիվները, ինչպես նաև Կանոնադրությանը համապատասխան իրականացվող նրա գործողությունները և գործարքները Հայաստանի Հանրապետությունում ազատվում են ցանկացած հարկից, տուրքից, գանձումից և այլ վճարումներից՝ բացառությամբ սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածում նշված սպասարկման կոնկրետ տեսակների համար վճարների:

Բանկը և Ներկայացուցչությունը ազատվում են մաքսային տուրքերի, ինչպես նաև մաքսային մարմինների կողմից գանձվող հարկերի վճարումից Բանկի, Ներկայացուցչության պաշտոնական նպատակների համար օգտագործվող ապրանքները Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներկրելու և Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից արտահանելու ժամանակ և՝ տնտեսական բնույթի արգելքների ու սահմանափակումների կիրառումից Բանկի, Ներկայացուցչության ծառայողական օգտագործման համար առարկաների ներկրման կամ արտահանման ժամանակ:

Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրման օրվանից Բանկն իր Կանոնադրությանը համապատասխան գործունեության իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերած ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մասով ազատվում է ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մատակարարների կողմից ներկայացված ավելացված արժեքի հարկից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Որևէ պարտավորություն կամ Բանկի կողմից թողարկած արժեթուղթ, ինչպես նաև դրանց համար ստացված շահաբաժին կամ տոկոս, անկախ նրանից, թե ով է դրանց պահառուն, Հայաստանի Հանրապետությունում որևէ այնպիսի հարկի ենթակա չէ.

ա) որը խտրական է այդ պարտավորությունների կամ արժեթղթերի

նկատմամբ միայն այն պատճառով, որ դրանք թողարկվել են Բանկի կողմից, կամ

բ) եթե այդպիսի հարկման համար միակ իրավական հիմնավորումը հանդիսանում է՝ նշյալ պարտավորությունների կամ արժեթղթերի թողարկման վայրը, այն արժույթը, որով դրանք թողարկվել են, ենթակա են վճարման կամ վճարվում են, Բանկին պատկանող որևէ հաստատության գտնվելու կամ գործունեության վայրը:

Բանկը և Ներկայացուցչությունը ազատվում են իրենց կողմից վճարվող աշխատավարձից և պարգևատրումներից սոցիալական և կենսաթոշակային ապահովագրման համար ապահովագրական մուծումների վճարման պարտականությունից: Սակայն ենթադրվում է, որ Բանկը տրամադրելու է Բանկի և Ներկայացուցչության՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող պաշտոնատար անձանց և աշխատակիցներին, որոնք ենթակա չեն Բանկի սոցիալական կամ համանման ապահովմանը, պարգևատրման վճարման այնպիսի պայմաններ, որոնք հաշվի կառնեն նման ապահովման բացակայությունը և թույլ կտան կենսաթոշակային և սոցիալական ապահովագրման համար ինքնուրույն վճարել ապահովագրական մուծումներ:

Բանկը և Ներկայացուցչությունը ազատվում են նաև ցանկացած հարկի, գանձման, տուրքի վճարման և պահման հետ կապված պարտավորություններից: Սույն հոդվածի՝ Բանկի, Ներկայացուցչության հարկումից ազատվելուն վերաբերող գործողությունը տարածվում է նաև այն դեպքերի վրա, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ պահումը և հարկի վճարումը կատարվում են հարկային գործակալի կողմից եկամուտ ստանալու աղբյուրի մոտ:

Հոդված 10

Ֆինանսական ընթացակարգերը

Բանկի գործառույթները կատարելու և նրա նպատակներին հասնելու համար, անհրաժեշտ չափով և հաշվի առնելով Կանոնադրության դրույթները, Բանկի ողջ գույքը և ակտիվները ազատ են ցանկացած տեսակի սահմանափակումից, կարգադրագրից և մորատորիումից:

Բանկը և Ներկայացուցչությունը, Համաձայնագրին և Կանոնադրությանը համապատասխան, կարող են Հայաստանի Հանրապետության տարածքում առանց խոչընդոտների ձեռք բերել ցանկացած գույք (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ շրջանառությունից առգրավված գույքի), արժույթ, արժեթուղթ և այլ ֆինանսական գործիք, ինչպես նաև տնօրինել դրանք, հաշիվներ ունենալ ցանկացած արժույթով, ֆինանսական գործարքներ ու պայմանագրեր կնքել, փոխանցել (տեղափոխել) իրենց պատկանող արժույթը, արժեթղթերն ու այլ ֆինանսական գործիքները Հայաստանի Հանրապետություն և Հայաստանի Հանրապետությունից, իրենց պատկանող արժույթը փոխարկել ցանկացած այլ արժույթի:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը Բանկին վաճառում է Հայաստանի Հանրապետության ազգային արժույթ այն ծավալով, որը ժամանակ

առ ժամանակ Բանկին կարող է անհրաժեշտ լինել Հայաստանի Հանրապետությունում իր ծախսերը հոգալու համար՝ համաձայնեցված փոխարժեքով և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի հետ առանձին համաձայնագրով սահմանված կարգով:

Հոդված 11

Դրոշը և խորհրդանշանը

Բանկն իրավունք ունի կիրառելու իր դրոշը և խորհրդանշանը Բանկի շինություններում, Ներկայացուցչության շինությունների վրա, ինչպես նաև Բանկի ավտոտրանսպորտային միջոցների վրա, Բանկի խորհրդաժողովների անցկացման վայրերում, եթե դրանք անցկացվում են բանկի շինություններից դուրս, միջոցառումների անցկացման ընթացքում, եթե Բանկը դրանց մասնակիցն է, ինչպես նաև այլ դեպքերում՝ Բանկի որոշմամբ:

Հոդված 12

Բանկի խորհրդաժողովները

Բանկը և Ներկայացուցչությունն իրավունք ունեն Ներկայացուցչության շինություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքի սահմաններում խորհրդաժողովներ գումարելու: Կառավարությունը երաշխավորում է, որ Բանկի կողմից գումարվող խորհրդաժողովների ժամանակ չեն ստեղծվի խոչընդոտներ քննարկման և որոշումների ընդունման լրիվ ազատության համար:

Հոդված 13

Բանկի պաշտոնատար անձանց և աշխատակիցների արտոնությունները, առավելությունները և անձեռնմխելիությունները

Կանոնադրությամբ և սույն Համաձայնագրով նախատեսված արտոնությունները, առավելությունները և անձեռնմխելիությունները տրամադրվում են Բանկի լիազորված ներկայացուցիչներին և նրանց տեղակալներին, Բանկի և Ներկայացուցչության պաշտոնատար անձանց և աշխատակիցներին՝ նրանց կողմից իրենց ծառայողական պարտականությունների արդյունավետ և անկախ կատարման համար՝ Բանկի՝ Կանոնադրությամբ նախատեսված գործունեությանը համապատասխան:

Բանկի, Ներկայացուցչության պաշտոնատար անձինք և աշխատակիցները.

ա) քրեական, վարչարարական և քաղաքացիական պատասխանատվությունից ունեն անձեռնմխելիություն ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ կատարած գործողությունների առնչությամբ: Այդ անձեռնմխելիությունը չի կիրառվում քաղաքացիական պատասխանատվության առնչությամբ ճանապարհատրանսպորտային

պատահարների դեպքերում,

բ) ընտանիքների անդամների հետ միասին օգտվում են հայրենադարձության հետ կապված նույն արտոնություններից, որոնցից օգտվում են Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված միջազգային կազմակերպությունների կամ դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատակիցները,

գ) Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ընթացքում ընտանիքի անդամների հետ միասին ազատվում են ներգաղթի հետ կապված սահմանափակումներից, արտասահմանցիների գրանցման ընթացակարգից և գրանցման վճարումներից,

դ) իրավունք ունեն ներկրելու կահույք, տնային առօրյա գործածության առարկաներ և անձնական օգտագործման այլ ապրանքներ, ներառյալ՝ ավտոմեքենա, որը նախատեսված է միայն անձնական օգտագործման համար, առանց մաքսային տուրքերի, հարկերի և գանձումների վճարման,

ե) ազատվում են Բանկից ստացվող աշխատավարձի կամ այլ պարգևավճարի համար հարկերի վճարումից:

Սույն հոդվածի «բ», «գ», «դ» կետերի դրույթները չեն տարածվում Բանկի, Ներկայացուցչության այն պաշտոնատար անձանց և աշխատակիցների վրա, որոնք հանդիսանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ կամ Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող անձինք:

Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրման օրվանից Բանկի, Ներկայացուցչության պաշտոնատար անձինք, աշխատակիցները, նրանց ընտանիքների անդամները, բացառությամբ Բանկի, Ներկայացուցչության այն պաշտոնատար անձանց և աշխատակիցների, որոնք հանդիսանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ կամ Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող անձինք, իրավունք ունեն անձնական օգտագործման համար նախատեսված ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մատակարարներին վճարված ավելացված արժեքի հարկի վերադարձման Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բանկը Կառավարությանը հաղորդում է Բանկի, Ներկայացուցչության պաշտոնատար այն անձանց, աշխատակիցների և այլ անձանց ազգանունները, որոնց նկատմամբ կիրառվում են սույն հոդվածի դրույթները՝ Կառավարության կողմից սույն Համաձայնագրին համապատասխան անձեռնմխելիությունների, առավելությունների և արտոնությունների տրամադրման նպատակով: Բանկը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը հաղորդում է Բանկի, Ներկայացուցչության պաշտոնատար անձանց, աշխատակիցների անունները, ծառայողական տվյալները, ինչպես նաև նրանց ժամանման և վերջնական մեկնման կամ Բանկում, Ներկայացուցչությունում նրանց գործունեության դադարեցման ամսաթվերը:

Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող փորձին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը Բանկին և սույն Համաձայնագրով նախատեսված անձեռնմխելիություններից, առավելություններից և արտոնություններից օգտվող անձանց հանձնում է հավատարմագրման մասին տեղեկանք,

հավատարմագրման քարտեր, որոնք հաստատում են, որ ներկայացնողն օգտվում է սույն Համաձայնագրով նախատեսված անձեռնմխելիություններից, առավելություններից և արտոնություններից:

Այդպիսի անձեռնմխելիություններից և առավելություններից օգտվող բոլոր անձինք պարտավոր են հարգել Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը: Նրանք նաև պարտավոր են չմիջամտել Հայաստանի Հանրապետության ներքին գործերին:

Հայաստանի Հանրապետությունը կարող է ցանկացած ժամանակ, պարտավոր չլինելով հիմնավորել իր որոշումը, տեղեկացնել Բանկին, որ Բանկի Ներկայացուցչության պաշտոնատար անձը կամ աշխատակիցը հանդիսանում է «persona non grata», կամ՝ որ Բանկի, Ներկայացուցչության ցանկացած այլ աշխատակից անընդունելի է:

Հոդված 14

Անձեռնմխելիությունից, առավելություններից և արտոնություններից հրաժարումը

Բանկի խորհուրդը կարող է հրաժարվել Կանոնադրությունում և սույն Համաձայնագրում նշված ցանկացած անձեռնմխելիությունից, առավելությունից կամ արտոնությունից այն չափով և այն պայմաններով, որոնք, նրա կարծիքով, կարող են բխել Բանկի շահերից:

Բանկի վարչության նախագահը պարտավոր է հրաժարվել Բանկի, Ներկայացուցչության ցանկացած աշխատակցի նկատմամբ ցանկացած անձեռնմխելիությունից, առավելությունից կամ արտոնությունից՝ բացառությամբ Բանկի վարչության նախագահի, Բանկի վարչության նախագահի տեղակալների և Բանկի վարչության անդամների, երբ, նրա կարծիքով, այդ անձեռնմխելիությունը, առավելությունը կամ բացառությունը խանգարում են արդարադատության իրականացմանը, և երբ դրանցից հրաժարումը Բանկի շահերին վնաս չի հասցնում: Համանման հանգամանքներում և միևնույն պայմանների դեպքում Բանկը պարտավոր է հրաժարվել Բանկի վարչության նախագահի, Բանկի վարչության նախագահի տեղակալների և Բանկի վարչության անդամների նկատմամբ ցանկացած անձեռնմխելիությունից, առավելությունից կամ բացառությունից:

Հոդված 15

Մուտքը և բնակությունը

Կառավարությունը ձեռնարկում է բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են ծառայողական գործերով Հայաստանի Հանրապետություն հետևյալ անձանց մուտք գործելուն, ժամանելուն, բնակվելուն, Հայաստանի Հանրապետությունից մեկնելուն և Հայաստանի Հանրապետությունում ազատ տեղաշարժվելուն աջակցելու համար.

ա) լիազոր ներկայացուցիչների և նրանց տեղակալների, Բանկի պաշտոնատար անձանց և աշխատակիցների, նրանց ընտանիքների անդամների

և մասնավոր տնային աշխատողների.

բ) Հայաստանի Հանրապետությունում Բանկի գործառնությունների և պաշտոնական գործունեության հետ կապված՝ Բանկի կողմից պաշտոնապես հրավիրված այլ անձանց: Այդ անձանց ազգանունները Բանկը հայտնում է Կառավարությանը:

Սույն հոդվածի «ա» ենթակետում նշված անձինք, բացառությամբ մասնավոր տնային աշխատողների, օգտվում են Հայաստանի Հանրապետությունում ազատ տեղաշարժվելու նույն իրավունքից՝ պահպանելով այցելության համար հատուկ թույլտվության անհրաժեշտություն ունեցող օբյեկտներին և վայրերին վերաբերող, այդտեղ գործող օրենքներն ու կանոնները, և՝ երթևեկության նույն պայմաններից, որոնք տրամադրվում են դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատակիցներին:

Սույն հոդվածի «ա» ենթակետում նշված անձինք, որոնք Հայաստանի Հանրապետության քաղաքացի չեն, բացառությամբ մասնավոր տնային աշխատողների, ազատվում են Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու և իրենց բնակվելու պայմանների հետ կապված ցանկացած սահմանափակումից: Այդ անձինք ազատվում են ներգաղթի սահմանափակումներից և գրանցումից, որին ենթակա են Հայաստանի Հանրապետության տարածքում մշտական բնակության վայր չունեցող անձինք, ինչպես նաև՝ ներգաղթի վերահսկողության նպատակով գրանցման հետ կապված պաշտոնական ընթացակարգերից: Բանկը համագործակցում է Կառավարության հետ՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը որևէ վնասի պատճառում թույլ չտալու նպատակով:

Հոդված 16

Վեճերի կարգավորումը

Բանկի և Կառավարության միջև սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ ցանկացած վեճ լուծվում է խորհրդակցությունների միջոցով:

Այն դեպքում, երբ այդ վեճերը և տարաձայնությունները չեն լուծվել բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով, կողմերից յուրաքանչյուրը կարող է վեճը փոխանցել միջնորդ դատարան՝ կազմված երեք միջնորդ դատավորներից, որոնցից մեկը նշանակվում է Կառավարության կողմից, մյուսը՝ Բանկի կողմից, իսկ երրորդը՝ նշանակված միջնորդ դատավորների համաձայնեցմամբ, իսկ եթե կողմերը չգան միասնական համաձայնության՝ Միավորված ազգերի կազմակերպության միջազգային դատարանի նախագահի կողմից: Միջնորդական դատաքննության ընթացակարգը սահմանվում է միջնորդ դատավորների կողմից, և կողմերը հոգում են միջնորդական դատաքննության ծախսերը, որոնց չափերը որոշում են միջնորդ դատավորները: Միջնորդ դատավորները որոշում են ընդունում ձայների մեծամասնությամբ, և նրանց ընդունած որոշումը վերջնական է և պարտադիր վեճի կողմերի համար:

Հոդված 17

Եզրափակիչ դրույթներ

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից կատարվելու մասին ծանուցումը Բանկի ստանալուց հետո:

Սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով: Արձանագրություններն ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու կարգով և կհանդիսանան Համաձայնագրի անբաժանելի մասը:

Կառավարությունը և Բանկը կարող են կնքել անհրաժեշտ լրացուցիչ համաձայնագրեր Կանոնադրության և սույն Համաձայնագրի կատարման համար:

Սույն Համաձայնագրի գործողությունը կարող է դադարեցվել Կառավարության կամ Բանկի խնդրանքով՝ Կառավարության և Բանկի միջև համաձայնեցված կարգով: Այդպիսի դադարեցման դեպքում սույն Համաձայնագիրն ուժը կորցնում է այն ժամանակահատվածի ավարտից հետո, որը տրամաբանորեն պահանջվում է Բանկի գործերի կարգավորման և Հայաստանի Հանրապետությունում նրա գույքի իրացման համար:

Կնքվել է Երևան քաղաքում 2010 թվականի ապրիլի 27, երկու օրինակից՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, ընդ որում՝ ռուսերեն տեքստն ունի գերակայող ուժ:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2010թ. նոյեմբերի 29-ին